Հարցաշար

Կրթություն

Հարց: Արի

Ի՞նչ միջոցառումներ են նախատեսվում կամ իրականացվում եկող ուս. տարիներին ուսուցիչների քանակի այսպիսի նվազման կանխարգելման համար: Արդյո՞ք կարելի է ավելացնել Մանկավարժական համալսարանի դիմորդների քանակը և ապահովել հատկապես երիտասարդ դասավանդողների կայուն աճ:

Հարց: Արի

Ինչպե՞ս եք տեսնում այս խնդիրների լուծումը, որոնք շատ առաջնահերթ են այն դեպքում, երբ մեզ պետք են հետաքրքրվող, վերլուծական մտքի տեր գալիք սերունդ: Արդյո՞ք պետք է փոփոխություններ կատարել ուսումնական ծրագրում, դասագրքերում, ծանոթագրական մասերն ավելացնել, և այլն:

Հարց: Արի

Արդյո՞ք իրականացվում է այդպիսի թարգմանական գործընթաց, եթե այո՝ կխնդրեմ նշեք, թե ո՞ր փուլում է այն գտնվում և ինչպիսի՞ արդյունքների եք հասել մինչ այժմ:

Հարց: Մարիա

Հիմնականում Հայաստանի կրթական կենտրոններում անգլերենը և ռուսերենը ուսուցանվում են որպես պարտադիր օտար լեզուներ, մինչդեռ շատ այլ միջազգային լեզուներ համարվում են երրորդական: Կարծու՞մ եք, որ կա հնարավորություն՝ ռուսերենը դարձնելու ընտրովի առարկա, ինչպես գերմաներենը, ֆրանսերեն ու իսպաներենը:

Հարց: Ալիս

Արդյո՞ք իսկապես կա այդպիսի նախագիծ, եթե այո՝ ինչքանո՞վ այն կարող է լուծում տալ վերոնշյալ խնդրին:

Հարց: Սաթեն

Ի՞նչ սկզբունքով է ատեստացիան կազմակերպվել երկու տարբեր վայրերում, երկու անհամադրելի բարդության աստիճաններով:

Հարց: Լաուրա

Հայաստանի Հանրապետության շատ մարզերում կա դասավանդողների պակաս

Կա՞ն մեխանիզմներ կամ գործիքներ, որոնք ստիպում են ուսուցման ոլորտ ներգրավել երիտասարդներին: Ես գիտեմ, որ կան որոշ մասնավոր տեղական կազմակերպություններ, որոնք դա անում են, բայց էլ ի՞նչ է արվում կառավարության կամ այլ կազմակերպությունների կողմից, կա՞ ինստիտուցիոնալ մոտեցում այս խնդրին և ինչքանո՞վ է այն արդյունավետ:

Հարց: Սաթեն

Արդյոք Աշտարակում համալսարանները տանելու նախագիծը հաստատված է, թե քննարկման մեջ է՞. Եթե հաստատված է, ապա ինչու՞ հենց Աշտարակ:

Բնապահպանություն

Հարց: Լաուրա

Ջրային ռեսուրսները մենք շարունակում ենք օգտագործել այնպես որ նրանք անսպառ են: Տարիներ շարունակ ձևավորվել է որ Հայաստանը ունի մեծ ծավալով ջրային պաշարների և թե՛ մեր տնտեսվարողները, թե՛ շարքային քաղաքացին չունի խնայողության հանդեպ վարքագիծ: Հայաստանը միջին չափով ունի մեկ մարդուն չորս անգամ ավելի ջուր քան նախատեսվում է: Սակայն ամեն տարի համաշխարհային բանկը միջազգային այլ ֆինանսական և զարգացմանը միտված կազմակերպությունները ունեն վերլուծություններ և հաշվարկներ որտեղ Հայաստանը ունի ջրի սակավության խնդիր: Իմ հարցը հետևյալն է ի՞նչ միջոցառումներ են ձեռք առնվում բնակչությանը իրազեկման համար: Այս խնդրի մասին խոսվու՞մ է բուհերում, դասագրքերում՞

Հարց: Յուրի

Ինչու են Հայաստանի մետաղահանքերի մեծամասնությունը շահագործվում տարբեր երկրների կողմից
և ինչու նրանք պատասխանատվություն չեն կրում հետագա պոչամբարների ռեկուլտացման համար:

Հարց: Յուրի

Արդյոք բնապահպանության նախաարությունը շահագործող կողմին պահանջ է ներկայացնում հանքերի շահագործման հետևանքով գոյացած թափոնների համար պատասխանատվություն կրել: Եթե այո, ապա որ փուլում է պոչամբարների և գոյացած այլ թափոնների ռեկուլտիվացման և մաքրման գործընթացը, քանի որ այս պահին 25 պոչամբարներից միայն 5-ն է ռեկուլտիվացված :
Հակառակ դեպքում, եթե այս հարցը պատշաճ ուշադրության չի արժանանում բնակավայրերի մոտ պոչամբարների կառուցման և հետագա ծավալի մեծացման հետևանքով ստեղծվում են մի շարք խնդիրներ որոնցից են՝ ջրային ռեսուրսների վատթարացումը, աղտոտումը, գյողերի, քաղաքների բնակիչների մի շարք առողջական խնդիրների առաջացումն ու տարածումը, թունավոր նյութերի պատճառով սննդամթերքի որակազրկումը:

Հարց: Քեթրին

Արդյոք անցկացվել են հետազոտություններ պարզելու համար թե ինչու են Վրաստանում մերժել <<Լիդիան Արմենիայի>> հանքի շահագործման առաջարկը: Եվ արդյոք դա մեզ բավարար տեղեկություն կմատուցի տվյալ կազմակերպության գործելաոճի և ինչու չէ նաև հեղինակության վերաբերյալ:

Հարց: Քեթրին

Արդյոք պատշաճ ու շադրություն և հետազոտության է ենթարկվել հանքի շահագաործման հետևանքով առաջացող հետևյալ խնդիրը՝ թթվային դրենաժի հետևանքով մի շարք ջրային ռեսուրսների՝ Սևանա լճի, գետերի, ջրհավաք ավազանների, ջրամբարների վրա բացասական ազդեցությունը, ինչպես նաև՝ մակերևութային և ստորերկրյա ջրերի երկարաժամկետ աղտոտումը: